ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-034-26.06.2017-ՊԻՄԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Աժ պատգամավոր Հրայր Թովմասյան	Հոդված 5	Հոդված 5. Օրենքի 6-րդ հոդվածում՝ 2) 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «2. ***Ազգային ժողովը կարող է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով վերացնել արտակարգ դրությունը կամ*** չեղյալ հայտարարել արտակարգ դրության իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացումը ~~կամ վերացնել արտակարգ դրությունը՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով~~:», 3) 4-րդ մասում մաս~~ում~~***ի առաջին նախադասության*** «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 92-րդ հոդվածի 7-րդ մասով» բառերը	Առաջարկն ընդունվել է : Օրենքի նախագծի 5-րդ հոդվածում կատարվել են փոփոխություններ:	Ընդունվել է:

			փոխարինել «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք~~ով~~***ի 107-րդ հոդվածի 5-րդ մասով և սույն օրենքի 1-ին մասով»*** բառերով, ***իսկ երկրորդ նախադասությունը հանել***:		
2.	Աժ պատգամավոր Հրայր Թովմասյան	Հոդված 6	Հոդված 6. Օրենքի 7-րդ հոդվածի՝1) 1-ին մասի 1-ին կետում «տեղաշարժման ազատության» բառերը փոխարինել «ազատ տեղաշարժ***վելու իրավունքի***~~ման~~» բառերով, իսկ 12-րդ կետում «խոսքի ազատության» բառերը՝ «կարծիք***ի*** արտահայտ***ման***~~ելու~~ ազատության» բառերով,	Առաջարկն ընդունվել է : Օրենքի նախագծի 6-րդ հոդվածում կատարվել են փոփոխություններ :	Ընդունվել է :
3.	Աժ պատգամավոր Հրայր Թովմասյան	Օրենքի նախագիծ	Նախագիծը համապատասխանեցնել Աժ կողմից հոկտեմբերի 5-ին առաջին ընթերցմամբ ընդունված «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում ներկայացված ձևակերպումներին:	Առաջարկն ընդունվել է: Օրենքի նախագծի 3-րդ, 5-րդ և 8-րդ հոդվածներում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է :